ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան 20___թ.

«_____» ընկերությունը, հասցե՝ _____, էլեկտրոնային փոստի հասցե՝_____, հեռ.՝ _____, ի դեմս_____, և «_____» ընկերությունը, հասցե՝ _____, էլեկտրոնային փոստի հասցե_____, հեռ.՝_____, ի դեմս _____, (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն արբիտրաժային համաձայնությունը հետևյալի մասին.

1. Կողմերը պայմանավորվում են, որ _____ պայմանագրից բխող և դրա կապակցությամբ առաջացած բոլոր վեճերի լուծումը հանձնվում է «ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» (այսուհետ՝ Կենտրոն) հիմնադրամին:
2. Արբիտրաժային վարույթի նկատմամբ կիրառվում են Կենտրոնի կողմից հաստատված Արբիտրաժային կանոնները:
3. Կողմերի միջև ծագած վեճը լուծվում է մեկ արբիտրի կողմից:
4. Արբիտրաժային վարույթի լեզուն հայերենն է:
5. Արբիտրաժի վայրը ք. Երևանն է:
6. Արբիտրաժային համաձայնության և վեճի նկատմամբ կիրառելի իրավունքը Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքն է:
7. Արբիտրաժային Տրիբունալի կողմից ճանաչված կամ օրենքի ուժով կողմերի միջև կնքված պայմանագրի կամ դրա որևէ դրույթի անվավերությունը չի հանգեցնում սույն արբիտրաժային համաձայնության անվավերության:
8. Կողմերի, Արբիտրաժային Տրիբունալի և Կենտրոնի միջև գրավոր փաստաթղթերի փոխանցումը և ծանուցումների իրականացումը կատարվում է էլեկտրոնային փոստի միջոցով:

9. Կողմերը պարտավոր են Կենտրոնին հայտնել գործի քննության ընթացքում իրենց էլեկտրոնային փոստի փոփոխության կամ ծանուցումները այլ միջոցով իրականացնելու անհրաժեշտության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում փաստաթղթերի փոխանցումը և ծանուցումների իրականացումը կատարվում է այն էլեկտրոնային հասցեով, որը նշված է պայմանագրում և համարվում է պատշաճ ծանուցում:
10. Սույն համաձայնությունը կնքված է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: